

« 31 » հունվար 2022 թ No 375 - Լ

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2022-2026
թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Առողջապահության նախարարություն» բաժնի 2-րդ կետի 2.2-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2022-2026 թվականների միջոցառումների ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն Հավելվածի:

2. Առողջապահության նախարարության «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վարդան Ավագյանին՝ յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 20-ը Ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվություն ներկայացնել Առողջապահության նախարարություն:

3. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ սույն հրամանը տեղադրել Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել
Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված
Հաստատված է Առողջապահության նախարարի
2022 թվականի հունվար « 31 » - ի թիվ 375 – Լ հրամանով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ
2022-2026ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ


ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՆԾԽ	նախաձննդյան խնամք
ՀՌԲ	հակառետրովիրուսային բուժում
ՀՌՎ	հակառետրովիրուսային
ՄՀՀ	Միջոցառումները համակարգող հանձնաժողով
ԴԿ4	դիֆերենցման կլաստեր 4
ՔՀԿ	քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՈՒԱՀԴ	ուղղակի ազդող հակավիրուսային դեղամիջոցներ
ՄԵՓՎ	մորից երեխային փոխանցման վերացում
ԿՍԿ	կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կին
ՎԳԽԿ	Վալիդացման գլոբալ խորհրդատվական կոմիտե
ՀԲՎ	հեպատիտ Բ վիրուս
ՀՅՎ	հեպատիտ Ց վիրուս
ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄԻԱՎԻՀ	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ինքնուրույն կատարվող հետազոտություն
ԻԿՎՀ	ինտեգրված կենսաբանական և վարքագծային հսկողություն
ՏԿՀ	տեղեկատվություն, կրթություն և հաղորդակցում
ԱՎԵԽ	առավել վտանգի ենթարկվող խումբ
ԻՄԳ	իրավական միջավայրի գնահատում
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱրՆ	Արդարադատության նախարարություն
SUS	տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդ
ՁԻԱՀ-ի ԿՀԿ	ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
ՀՎԿԱԿ	Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն
ԻՀԱԿ	Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ԱԱԻ	Առողջապահության ազգային ինստիտուտ
ՆԱՓԾ	Ներարկիչների և ասեղների փոխանակման ծրագիր
ՕՎ	օպորտունիստական վարակ
ՊԹ	պնևմոցիստիկ թոքաբորբ
ՀԿԿ	հետկոնտակտային կանխարգելում
ԱԲ	առաջնային բուժօգնություն
ԾՆՀ	ծառայություններ տրամադրողի կողմից նախաձեռնված հետազոտություններ
ՄԻԱՎԱՄ	ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ

ՄԵՓԿ	մորից երեխային փոխանցման կանխարգելում
ՄՁԿԱԾ	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիր
ՆԿԿ	նախակոնտակտային կանխարգելում
ԳՄԿ	գնումների և մատակարարման կառավարում
ԹՆՕ	թմրամիջոցների ներարկային օգտագործող
ՍՎ	սեռական ճանապարհով փոխանցվող վարակ, սեռավարակ
ԿՍ	կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող
ՏԱ	տեխնիկական աջակցություն
ՏԲ	տուբերկուլոզ
ՏԳ	տրանսգենդեր անձ
ՏԿԲ	տուբերկուլոզի կանխարգելիչ բուժում
ՄԱԿ-ի	ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիր
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ԱՄՆԴ	ԱՄՆ դոլար
ՎԾ	վիրուսային ծանրաբեռնվածություն
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

1.1 Ընդհանուր ակնարկ Հայաստանում ՄԻԱՎ համաճարակի վերաբերյալ՝ միտումները և առկա իրավիճակը

1. Փաստաթղթի առաջին մասում ամփոփ ներկայացված են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետ կապված միտումները և առկա իրավիճակը Հայաստանում: ՄԻԱՎ վարակի առաջին դեպքը Հայաստանում արձանագրվել է 1988թ.-ին: 2021թ. հունիսի 30-ի դրությամբ՝ համաճարակի 33 տարիների ընթացքում, Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցվել է ՄԻԱՎ վարակի 4,366 (3,029 դեպք տղամարդկանց և 1,337 դեպք կանանց շրջանում) և ՁԻԱՀ-ի 2,128 դեպք: Արձանագրված մահվան դեպքերի թիվը 989 է: 2021թ. առաջին կեսին ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 196 դեպք:
2. Պատկեր 1-ում ներկայացված է 2000-2019թթ. ժամանակահատվածում գրանցված ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի մոտավոր քանակը: Այն ցույց է տալիս աճի միտում 2000-2004թթ., որին հաջորդում է կտրուկ նվազում մինչև մոտավորապես 2011թ.-ը, այնուհետև նվազման միտումը դառնում է ավելի աստիճանական:

Պատկեր 1. ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի գնահատված թիվը, Հայաստան, 2000-2019թթ. (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիր, 2020)




3. Պատկեր 2-ը ցույց է տալիս ՁԻԱՀ-ով պայմանավորված մահվան դեպքերի մոտավոր քանակը նույն ժամանակահատվածի համար, որտեղ երևում է հստակ աճ 2000-2012թթ. ընթացքում, ինչին էլ հաջորդում է դեպքերի քանակի աստիճանական նվազում:

Պատկեր 2. ՁԻԱՀ-ով պայմանավորված մահվան դեպքերի գնահատված


¹ ԻՀԱԿ տվյալներ, սեպտեմբերի 9, 2021թ.

թիվ, Հայաստան, 2000-2019թթ (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիր, 2020)



4. Պատկեր 3-ում ներկայացված է ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերում վարակի փոխանցման ուղիների բաշխվածությունը 2004-2019թթ. ժամանակահատվածի համար: Համաճարակի առաջին տարիներին ՄԻԱՎ վարակի փոխանցման բոլոր նոր դեպքերի երկու երրորդը պայմանավորված էր թմրամիջոցների ներերակային օգտագործողների (ԹՆՕ) շրջանում ոչ անվտանգ ներարկումներով, մեկ երրորդը՝ հետերոսեքսուալ ճանապարհով վարակի փոխանցմամբ: Ինչևէ, 2005թ.-ից ի վեր, հետերոսեքսուալ ճանապարհը դարձել է վարակի փոխանցման հիմնական ուղին: Միևնույն ժամանակ, թմրամիջոցների ներերակային օգտագործմամբ պայմանավորված ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքերի համամասնությունը կտրուկ նվազել է՝ 2019թ.-ին կազմելով ընդամենը 7.6%:

Պատկեր 3. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերում վարակի փոխանցման ուղիների համամասնական բաշխվածությունը Հայաստանում, 2004թ. – հոկտեմբեր 2019թ. (ՁԻԱՀ-ի ԿՀԿ, 2019)



5. 2010-2020թթ. ժամանակահատվածում ՄԻԱՎ վարակի նոր գրանցված դեպքերի բաշխումն ըստ փոխանցման ուղիների առավել մանրամասն

ներկայացված է Աղյուսակ 1-ում: Աղյուսակը ցույց է տալիս հետերոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման համամասնության հետևողական աճի հստակ միտում՝ 2010թ. 59.5%-ից մինչև 81.6% 2020թ.-ին: Նույն ժամանակահատվածում թմրամիջոցների ներերակային օգտագործումը որպես փոխանցման ուղի կայուն կերպով նվազում է՝ 2010թ. մեկ երրորդից (33.8%) հասնելով ընդամենը 5.7%-ի 2020թ.-ին: Աղյուսակից նաև երևում է, որ նշանակալիորեն մեծացել է հոմո/բիսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման համամասնությունը՝ 2010թ. ընդամենը մեկ դեպքից (0.7%) հասնելով 49 դեպքի (10.9%) 2019թ.-ին և 34 դեպքի (9.2%) 2020թ.-ին:

Աղյուսակ 1: Նոր ախտորոշված ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց քանակն ըստ փոխանցման ուղիների (քանակ և համամասնություն) 2010-2020թթ. (ԶԻԱՀ-ի ԿՀԿ, 2021թ.)


Փոխանցում	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Հետերոսեքսուալ	88	130	165	179	272	236	244	289	340	355	301
	59.5%	71.4%	72.4%	75.2%	81.4%	80.3%	80.5%	80.7%	79.3%	79.2%	81.6%
Հոմո/բիսեքսուալ	1	4	5	13	10	12	17	17	43	49	34
	0,7%	2,2%	2,2%	5,5%	3,0%	4,1%	5,6%	4,7%	10,0%	10,9%	9,2%
Թմրամիջոցների ներերակային օգտագործում	50	42	46	33	42	37	35	40	34	38	21
	33,8%	23,1%	20,2%	13,9%	12,6%	12,6%	11,6%	11,2%	7,9%	8,5%	5,7%
Արյան փոխներարկում	1	0	1	0	0	0	0	0	0	1	0
	0.7%	0%	0.4%	0%	0%	0%	0%	0%	0%	0.2%	0%
Մորից երեխային փոխանցում	3	2	3	5	7	4	1	5	2	3	9
	2.0%	1.1%	1.3%	2.1%	2.1%	1.4%	0.3%	1.4%	0.5%	0.7%	2.4%
Անհայտ	5	4	8	8	3	5	6	7	10	2	4
	3.4%	2.2%	3.5%	3.4%	0.9%	1.7%	2.0%	2.0%	2.3%	0.4%	1.1%
Ընդամենը	148	182	228	238	334	294	303	358	429	448	369

6. 2020թ.-ին նորաձինների վաղ ախտորոշմամբ գրանցվել է 1 դրական դեպք նորաձինների շրջանում, մյուս երեխաները ծնվել են տարբեր տարիների:

7. Հոմո/բիսեքսուալ եղանակով վարակի փոխանցման դեպքերի քանակը կարող է նույնիսկ ավելի մեծ լինել՝ հաշվի առնելով տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդկանց (SUS) շրջանում ՄԻԱՎ վարակի փոխանցման մասին թերզեկուցման հավանականությունը խարանով և որպես SUS բացահայտվելու նկատմամբ ունեցած վախով պայմանավորված: Բացի այդ, Աղյուսակը նաև ցույց է տալիս, որ տարիների ընթացքում շարունակում են գրանցվել մորից երեխային վարակի փոխանցման ոչ մեծաթիվ դեպքեր, որոնց թիվը 2020թ.-ին կազմել է 9 (2.4%) դեպք: Սա ընդգծում է մորից երեխային վարակի փոխանցման կանխարգելումն ամրապնդելու կարևորությունը:


8. Պատկեր 4-ում ներկայացված է 2010-2020թթ. նոր ախտորոշված ՄԻԱՎ վարակի դեպքերի քանակի միտումը գրաֆիկի տեսքով (տես նաև վերը ներկայացված Աղյուսակ 1-ը): Այն ցույց է տալիս նոր ախտորոշված դեպքերի հստակ տարեկան աճ, իսկ 2020թ. դեպքերի նվազումը, ամենայն հավանականությամբ, ՄԻԱՎ-ի վերաբերյալ կատարված հետազոտությունների նվազման արդյունք է՝ պայմանավորված COVID-19 համաճարակով: Երբ համեմատում ենք Պատկեր 4-ի միտումը Պատկեր 1-ում 2000-2019թթ համար ներկայացված ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի մոտավոր քանակի նվազման միտման հետ (հիմնված սպեկտրի գնահատումների վրա), ամենահավանական բացատրությունը կարող է լինել այն փաստը, որ նոր ախտորոշված ՄԻԱՎ դեպքերի թվում նշանակալի համամասնություն են կազմում **ուշ ախտորոշման** դեպքերը, ինչն առավել մանրամասն քննարկվում է 2.3.2 բաժնում:

Պատկեր 4: Նոր ախտորոշված ՄԻԱՎ-ով ապրող անձանց քանակը, 2010-2020թթ. (ՁԻԱՀ-ի ԿՀԿ, 2021թ.)



9. Պատկեր 5-ում ներկայացված է 2020թ.-ին Հայաստանում արձանագրված ՄԻԱՎ-ով վարակման նոր դեպքերի ընդհանուր քանակը՝ ըստ սեռի և տարիքի: Գրանցվել են 369 ՄԻԱՎ վարակի նոր դեպքեր, որոնցից 251-ը՝ տղամարդկանց, իսկ 118-ը՝ կանանց շրջանում: Այն ցույց է տալիս, որ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ վարակի դեպքերի մեծ մասը գրանցվել է 25-ից 39 տարիքային միջակայքում (49.8%), իսկ կանանց շրջանում՝ 30-ից 44 տարիքային միջակայքում (45.8%):

Պատկեր 5. Գրանցված ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի ընդհանուր քանակը, Հայաստան 2020թ. ըստ սեռի և տարիքի (ԻՀԱԿ, 2020թ.)




1.1.1 Հեպատիտ Ց-ով համակցված վարակներ

10. Հեպատիտ Ց-ով համակցված վարակի դեպքերի մակարդակը ընդհանուր առմամբ ցածր է, բացառությամբ ԹՆՕ-ների, ում մոտ այն բավականին բարձր է (37.6%): Հեպատիտ Ց-ն հատկապես խնդրահարույց է ԹՆՕ-ների շրջանում և զգալի տոկոս է կազմում SUS-ների շրջանում (5.6%):
11. 2018-2020թթ. ժամանակահատվածում, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում 1,246-ից 52-ի մոտ ախտորոշվել է հեպատիտ Ց (4.2% համակցված վարակի դեպքերի տոկոս): Այս նոր ախտորոշված ՄԻԱՎ/հեպատիտ Ց-ով համակցված վարակի դեպքերի գրեթե կեսն (25 դեպք) արձանագրվել է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:

1.1.2 ՏԲ/ՄԻԱՎ համակցված վարակի դեպքեր

12. Պատկեր 6-ում ներկայացված են ՏԲ դեպքերի միտումը, ՏԲ/ՄԻԱՎ համակցված վարակի դեպքերը և ՏԲ/ՄԻԱՎ համակցված վարակի դեպքերի համամասնությունը 2008-2019թթ. համար (Գլոբալ հիմնադրամ, 2020թ.): ՏԲ դեպքերի քանակի կտրուկ աճ է արձանագրվել 2008թ.-ից (n=355) 2012թ.-ի (n=1,518) միջև ընկած ժամանակահատվածում, որից հետո այն աստիճանաբար նվազել է՝ 2019թ.-ին հասնելով 670-ի: Մինչ ՏԲ դեպքերի քանակը նվազել է, ՏԲ/ՄԻԱՎ վարակի համակցված դեպքերի քանակը մնացել է բավականին կայուն 2012թ.-ից ի վեր: Արդյունքում, ՏԲ/ՄԻԱՎ վարակի համակցված դեպքերի տոկոսը նշանակալիորեն աճել է 2010թ.-ից (1.4%)՝ 2019թ.-ին հասնելով 9.3%-ի:


Պատկեր 6. ՏԲ/ՄԻԱՎ դեպքերը Հայաստանում, 2008–2019թթ. (ԹԱԿ, 2020).



13. 2020թ.-ին արձանագրվել է ՏԲ/ՄԻԱՎ համակցված վարակի 50 դեպք և մահվան 14 դեպք (Գլոբալ հիմնադրամ, 2020թ., էջ. 14): Ներկայումս ՄԻԱՎ վարակի ախտորոշման բոլոր նոր դեպքերն անցնում են սկրինինգ ՏԲ նկատմամբ: 2019թ.-ին ՏԲ կանխարգելիչ (ՏԲԿ) բուժում է ստացել 12 մարդ: ՄԻԱՎ վարակով նոր ախտորոշված 369 մարդուց 35-ը ստացել է և՛ ՀՌՎ դեղեր, և՛ ՏԲ բուժում: Բոլոր ՏԲ պացիենտներն անցել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն մեկ անգամ բուժման սկզբում, հիվանդանոցում գտնվելու ընթացքում: Ամբուլատոր պայմաններում բուժում ստացողներն անցնում են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն առաջնային բուժօգնության (ԱԲ) հաստատությունների տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներում: Սա թույլ է տալիս ՏԲ ախտորոշում ունեցող ավելի մեծ թվով մարդկանց ընդգրկել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններում:

Պատկեր 7. ՄԻԱՎ դրական դեպքերի համամասնությունը ՏԲ նոր դեպքերի մեջ (%) և ՏԲ/ՄԻԱՎ դեպքերը 100,000 բնակչի հաշվով Հայաստանում, 2015-2020թթ.²

² Աղբյուր՝ ԱՀԿ ՏԲ համաշխարհային տվյալների բազա, <https://www.who.int/tb/country/data/download/en/>, ԱՀԿ Տուբերկուլոզի վերահսկման ազգային ծրագիր/ՏՎԱԾ (2020թ.)



14. Պատկեր 7-ը (տես՝ վերևում) ներկայացնում է **ՏԲ նոր դեպքերի մեջ ՄԻԱՎ դեպքերի** համամասնության միտումը 2015-2020թթ.-ի համար: Այն ցույց է տալիս ոչ նշանակալի աճ 9.1%-ից 10.6%-ի 2020թ.-ին, մինչդեռ 2016թ.-ին գրանցվել է նշանակալի անկում (5.6%): Բացի այդ, Պատկեր 7-ում նաև երևում է **ՏԲ/ՄԻԱՎ համակցված վարակի դեպքերի նվազման միտում** 2015-2020թթ. ժամանակահատվածում՝ 2015թ.-ին 100,000 բնակչի հաշվով 3.4 գործակցից նվազելով մինչև 2.4 գործակցից 2018թ.-ին և 1.3 գործակցից 2020թ.-ին: Հայաստանում **գրանցված ՏԲ/ՄԻԱՎ համակցված վարակից մահացության ցուցանիշը** նվազել է՝ 2017թ.-ին 100,000 բնակչի հաշվով 0.74 գործակցից հասնելով 100,000 բնակչի հաշվով 0.47 գործակցի 2019թ.-ին և 2020թ.-ին (ԹԱԿ, 2020թ.):

15. Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործընթացը մեկնարկել է 1990-ականներին, երբ երկրում սկսեցին արձանագրվել ՄԻԱՎ վարակի դեպքեր: Այդ ժամանակից ի վեր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը մշտապես զարգացել է, ընդլայնվել է ծրագրերի և ծառայությունների շրջանակներն ու ծածկույթը՝ ապահովելով իրականացվող միջոցառումների փաստական տվյալներով հիմնավորվածությունը և համապատասխանությունն այն անձանց կարիքներին, որոնք գտնվում են ՄԻԱՎ վարակի փոխանցման առավել ռիսկային խմբերում և/կամ ունեն կանխարգելման, բուժման և խնամքի ծառայությունների կարիք:

16. Առավել վտանգի ենթարկվող խմբերը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեքստում այն խմբերն են, որոնք ենթարկվում են համաճարակաբանական մեծ ազդեցության, չունեն ծառայություններից օգտվելու բավարար հնարավորություն և/կամ բախվում են քրեականացման կամ որևէ այլ կերպ մարգինալացման խնդրի³. համաճարակաբանական փաստերը, ինտեգրված կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները (ԻԿՎՀ 2018⁴), ինչպես նաև ծրագրային տվյալները ցույց են տալիս, որ առավել վտանգի ենթարկվող խմբերը (ԱՎԵԽ-ները), այդ թվում՝ թմրամիջոցների ներերակային օգտագործողները (ԹՆՕ), կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք (ԿՍԿ-ներ) և նրանց հաճախորդները, տղամարդկանց հետ սեռական կապեր ունեցող տղամարդիկ (ՏՍՏ-ներ), տրանսգենդեր կանայք, քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձինք և աշխատանքային միգրանտները, ենթակա են ՄԻԱՎ վարակման ավելի բարձր ռիսկի ընդհանուր բնակչության համեմատ՝ պայմանավորված համակցված կենսաբանական, սոցիալ-տնտեսական և կառուցվածքային գործոններով: Բացի այդ, համապատասխան ծառայությունները նրանց համար նշանակալիորեն ավելի նվազ հասանելի են, քան բնակչության մյուս խմբերի համար: Հետևաբար, անհրաժեշտ են հատուկ ջանքեր և ռազմավարական ներդրումներ ՄԻԱՎ վարակի հետ կապված ծառայությունների ծածկույթը, անաչառությունը և հասանելիությունը մեծացնելու ուղղությամբ: Ավելին, ԱՎԵԽ-ները կարող են բախվել մարդու իրավունքների ոտնահարման,

³ Գլոբալ հիմնադրամ (2017թ.): ՄԻԱՎ հսկողության տարբերակները բնակչության առավել վտանգի ենթարկվող և խոցելի խմբերի համար Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհներում: Ուղղորդող նշում՝ 15 հունիս, 2017թ. Ժնև. ՁԻԱՀ-ին, տուբերկուլոզին և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ:

⁴ ՀՀ առողջապահության նախարարություն (2018թ.): Ինտեգրված կենսաբանական և վարքային հետազոտություն թմրամիջոցների ներերակային օգտագործողների, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց, տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդկանց և տրանսգենդեր անձանց շրջանում, 2018թ. Երևան, ՀՀ առողջապահության նախարարություն

սոցիալական և տնտեսական մարզինալացման և քրեականացման հետ, ինչն էլ ավելի է մեծացնում նրանց խոցելիությունը և ռիսկերը և նվազեցնում է առանցքային ծառայություններից օգտվելու նրանց հնարավորությունը: Այս առումով, 2022-2026թթ. Ազգային ռազմավարական պլանը առաջնահերթություն է տալու նշված առավել վտանգի ենթարկվող խմբերին:

17. 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը ներկա և նախկին ազգային ծրագրերի **շարունակությունն** է այն առումով, որ ուղղված է ծառայությունների մատուցման (կանխարգելում, հետազոտում, բուժում) հետ կապված մշտապես առաջացող հիմնական առաջնահերթ մարտահրավերների լուծմանը և սոցիալական, իրավական ու քաղաքականության միջավայրերի ձևավորմանը: Մյուս կողմից, նոր ազգային ծրագրի նպատակն է նաև ընդլայնել ծրագրերը և ծառայությունները **նոր ի հայտ եկող մարտահրավերները լուծելու** կամ նորարարական մոտեցումներ ներդնելու կամ խթանելու համար, ինչպիսիք են նախակոնտակտային կանխարգելումը, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ինքնուրույն կատարվող հետազոտությունները, տրանսգենդեր անձանց համար նախատեսված ծառայությունները կամ նորարարական մոտեցումները նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակի մարտահրավերների առնչությամբ:

2.1 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի համապատասխանությունը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականություններին և ռազմավարություններին

2.1.1 Համապատասխանությունը համաշխարհային և տարածաշրջանային ՄԻԱՎ ռազմավարություններին

18. Նույն համատեքստում, 2022-2026 թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը հիմնված է նույն սկզբունքների վրա և ուղղված է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ՏԲ-ի և վիրուսային հեպատիտի ու սեռավարակների վերաբերյալ **համաշխարհային, տարածաշրջանային և ազգային ռազմավարությունների և գործողությունների պլանների** առաջնահերթություններին, այդ թվում՝ 1) ՁԻԱՀ-ի վերաբերյալ համաշխարհային ռազմավարություն 2021-2026թթ. «Վերջ անհավասարությանը, վերջ ՁԻԱՀ-ին» (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիր, 2021ա); 2) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ քաղաքական հռչակագիր 2021թ. (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիր, 2021բ); և 3) Առողջության համաշխարհային կազմակերպության 2022-2030թթ. ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտի և սեռավարակների վերաբերյալ եվրոպական տարածաշրջանային գործողությունների պլաններ (ԱՀԿ, 2021թ.):

19. 2021–2026թթ ՁԻԱՀ-ի վերաբերյալ համաշխարհային ռազմավարության հետ համապատասխանությունը: Այս առումով, 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը համահունչ է 2025թ. ՄԻԱՎ թիրախներին՝ ուղղված անհավասարության նվազեցմանը, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ռիսկի խմբերի համայնքներին ուշադրության կենտրոնում պահելուն (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիր, 2021ա):

Անհավասարության նվազեցման 2025թ.-ի թիրախները

- 10%-ից քիչ կկազմի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և առավել վտանգի ենթարկվող խմբերում ընդգրկվածների թիվը, որոնք բախվում են խարանի և խտրականության հետ
- 10%-ից քիչ կկազմի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, կանանց և աղքատների ու առավել վտանգի ենթարկվող խմբերում ընդգրկվածների թիվը, որոնք բախվում են գենդերային անհավասարության և գենդերային բռնության հետ
- 10%-ից քիչ կկազմի այն երկրների թիվը, որտեղ գործում են պատժիչ օրենքներ և քաղաքականություններ
- ՄԻԱՎ վարակի ռիսկի խմբում գտնվողների 95%-ը կօգտվեն համակցված վարակների կանխարգելումից
- 95-95-95% ՄԻԱՎ-ի ախտորոշման և բուժման կասկադ
- Կանանց 95%-ը կօգտվի սեռական և վերարտադրողական առողջության ծառայություններից
- Ուղղահայաց փոխանցման վերացմանն ուղղված ծառայությունների ծածկույթը կկազմի 95%
- ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 95%-ը կստանա ՏԲ կանխարգելիչ բուժում
- ՄԻԱՎ-ով ապրող և ռիսկի խմբում գտնվող մարդկանց 90%-ն կօգտվի այլ ինտեգրված բուժօժանդություններից

20. Բացի այդ, 2022-2026 թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի առաջնահերթ ռազմավարությունները և միջոցառումները սերտորեն կապակցված են **2021–2026թթ. ՁԻԱՀ-ի վերաբերյալ համաշխարհային ռազմավարության երեք ռազմավարական առաջնահերթությունների հետ** (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիր, 2021ա, էջ 14)՝ 1) առավելագույնին հասցնել ՄԻԱՎ վարակին առնչվող ծառայությունների և լուծումների արդար և հավասար հասանելիությունը, 2) վերացնել ՄԻԱՎ վարակի հետ կապված արդյունքների ապահովման խոչընդոտները և 3) լիարժեք կերպով տրամադրել ռեսուրսներ և ապահովել ՄԻԱՎ վարակին արդյունավետ հակազդման կայուն միջոցառումների իրականացումը՝ ինտեգրելով դրանք առողջապահական, սոցիալական պաշտպանության, հումանիտար

հաստատությունների համակարգերում, ինչպես նաև համաճարակներին հակազդման միջոցառումների իրականացումը:

21. Այս համատեքստում 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի (ՄՁԿԱԾ 2022-2026թթ.) չորս առաջնահերթ ոլորտները և դրանց առնչվող առաջնահերթ ռազմավարությունները (տե՛ս ստորև) սերտորեն կապված են 2021-2026թթ. ՁԻԱՀ-ի վերաբերյալ համաշխարհային ռազմավարության **10 արդյունքների ոլորտների և փոխկապակցված խնդիրների** հետ (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիր, 2021թ, էջ 14-15), ինչպես ներկայացված է ստորև՝

- 1) **ՄԻԱՎ վարակի առաջնային կանխարգելում** ԱՎԵԽ-ների, դեռահասների և բնակչության այլ առաջնահերթ խմբերի, նաև մեծաթիվ ՄԻԱՎ վարակի դեպքեր գրանցող վայրերում գտնվող դեռահասների, երիտասարդ կանանց և տղամարդկանց համար (տե՛ս ՄՁԿԱԾ 2022-2026 թթ. Առաջնահերթ ոլորտ 1)
- 2) ՄԻԱՎ-ով ապրող դեռահասները, երիտասարդները և չափահասները, հատկապես՝ ԱՎԵԽ-ները և բնակչության այլ առաջնահերթ խմբերը **տեղյակ են իրենց կարգավիճակի մասին** և նրանց **անմիջապես առաջարկվում է և մատուցվում է ՄԻԱՎ վարակի որակյալ, ինտեգրված բուժում ու խնամք՝** նպաստելով նրանց առողջության և բարօրության բարելավմանը (տե՛ս ՄՁԿԱԾ 2022-2026թթ. Առաջնահերթ ոլորտ 2)
- 3) **ՄԻԱՎ վարակի ուղղահայաց փոխանցման կանխարգելման և մանկաբուժական հարմարեցված, ինտեգրված և տարբերակված ծառայությունների տրամադրում կանանց և երեխաներին**, հատկապես մեծ թվով ՄԻԱՎ վարակի դեպքեր գրանցող վայրերում գտնվող դեռահաս աղջիկներին և երիտասարդ կանանց (տե՛ս ՄՁԿԱԾ 2022-2026թթ. Առաջնահերթ ռազմավարություն 1.7 մորից երեխային փոխանցման վերացման վերաբերյալ)
- 4) **ՄԻԱՎ վարակին հակազդման լիարժեք կերպով ընդունված, լիազորություններով օժտված, ռեսուրսներով հագեցած, ինտեգրված և համայնքի կողմից ղեկավարվող միջոցառումներ**, որոնց նպատակն է ապահովել ՄԻԱՎ-ին հակազդման փոխակերպող և կայուն միջոցառումներ (տե՛ս ՄՁԿԱԾ 2022-2026թթ. Առաջնահերթ ռազմավարություն 3.1, որն ուղղված է քաղաքացիական հասարակության հզորացմանը)
- 5) ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, ԱՎԵԽ-ները և ՄԻԱՎ վարակի ռիսկի խմբերում գտնվող մարդիկ **օգտվում են մարդու իրավունքներից, հավասարությունից և արժանապատվությունից, ազատ են խարանից ու խտրականությունից** (տե՛ս ՄՁԿԱԾ 2022-2026թթ. Առաջնահերթ ռազմավարություններ 3.2-ը և 3.3-ը, որոնք ուղղված են բարենպաստ իրավական և համայնքային միջավայրերի ձևավորմանը)
- 6) Կանայք և աղջիկները, տղամարդիկ և տղաներն իրենց ողջ բազմազանությամբ կիրառում և խթանում են **սեռով չպայմանավորված**

անաչառ սոցիալական նորմերը և գենդերային հավասարությունը և աշխատում են միասին գենդերային բռնության վերացման և ՄԻԱՎ վարակի ռիսկերն ու ազդեցությունը մեղմելու ուղղությամբ (գենդերային հավասարությունը 2022-2026թթ ՄՁԿԱԾ բազմակողմանի առաջնահերթություն է, ինչի մասին է վկայում հատուկ ուշադրությունը սեռական փոքրամասնությունների գենդերային ինքնության և առավել վտանգի ենթարկվող խմբերում կանանց և տղամարդկանց տարբերակված կարիքների նկատմամբ)

- 7) **Երիտասարդներ, որոնք ունեն լիարժեք լիազորություն և ռեսուրսներ** ՄԻԱՎ վարակին հակազդման նոր ուղղություն սահմանելու և անհավասարություններին ու ՁԻԱՀ-ին վերջ տալու նպատակով անհրաժեշտ առաջընթացը խթանելու համար (տե՛ս 2022-2026թթ ՄՁԿԱԾ Խնդիր 1-ը, որն ուղղված է առավել վտանգի ենթարկվող և այլ խոցելի խմբերում ընդգրկված երիտասարդներին)
- 8) **ՄԻԱՎ վարակին հակազդման լիարժեք ֆինանսավորվող և արդյունավետ միջոցառումներ**, որոնք իրականացվում են 2025թ. թիրախների իրագործման նպատակով (տե՛ս 2022-2026թթ ՄՁԿԱԾ Առաջնահերթ ռազմավարություն 3.2-ը, որը վերաբերում է կայուն պետական ֆինանսավորմանը)
- 9) **Առողջության և սոցիալական պաշտպանության համակարգեր՝** ՄԻԱՎ-ով ապրող, ռիսկի խմբում գտնվող կամ ՄԻԱՎ վարակի ազդեցությանը ենթարկված անձանց համար հնարավորություններ ընձեռող միջավայրերի ձևավորմանը, նրանց բարօրությանը և կենսապայմանների բարելավմանը նպաստող նախագծեր, որոնք ուղղված են անհավասարության նվազեցմանը և այս անձանց ապրելու և բարգավաճելու հնարավորության ընձեռնմանը (տե՛ս 2022-2026թթ ՄՁԿԱԾ Առաջնահերթ ռազմավարություն 2.3 -ը, որը վերաբերում է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խնամքին և աջակցությանը և 3.3-ը, որի նպատակն է ամրապնդել համայնքին աջակցող միջավայրերը)
- 10) **Լիարժեք պատրաստված և ճկուն ՄԻԱՎ-ին հակազդման միջոցառումներ**, որոնք պաշտպանում են ՄԻԱՎ-ով ապրող, ռիսկի խմբում գտնվող կամ ՄԻԱՎ վարակի ազդեցությանը ենթարկված անձանց **մարդասիրական աջակցություն տրամադրող կազմակերպություններում**, ինչպես նաև պաշտպանում են նրանց այսօրվա և ապագա համաճարակների և այլ ցնցումների անբարենպաստ ազդեցություններից (այս Արդյունքների ոլորտը հատկապես տեղին է՝ հաշվի առնելով վերջին ռազմական բախումը և դրա արդյունքում առաջացած փախստականների ներհոսքը, ինչպես նաև նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակով պայմանավորված՝ ՀՌՎ բուժման անընդհատության և խոցելի խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի շարունակականության ապահովման խնդիրները):

22. Ավելին, 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը ներառում է մեծ թվով ռազմավարություններ և միջոցառումներ, որոնք

կոնկրետ վերաբերում են **2021–2026թթ ՁԻԱՀ-ի վերաբերյալ համաշխարհային ռազմավարության հինգ բազմակողմանի փոխկապակցված խնդիրներին** (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիր, 2021ա, էջ 15), այն է՝ 1) առաջնորդում, երկրի լիազորվածություն և ադվոկացիա (շահապաշտպանություն), 2) գործընկերություններ, բազմոլորտայնություն և համագործակցություն, 3) տվյալներ, գիտություն, հետազոտություն և նորարարություն, 4) խարանի ու խտրականության նվազեցում, մարդու իրավունքների և գենդերային հավասարության խթանում և 5) քաղաքներ, ուրբանիզացիա և մարդկանց բնակավայրեր:

23. 2022–2030թթ. ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտի և սեռավարակների վերաբերյալ եվրոպական տարածաշրջանային գործողությունների պլանների հետ համապատասխանությունը. 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը (ՄՁԿԱԾ 2022-2026թթ.) համապատասխանում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ եվրոպական տարածաշրջանային գործողությունների պլանի **չորս ռազմավարական ուղղություններին** (ԱՀԿ, 2021թ)՝ 1) ձևավորել ՄԻԱՎ-ի, ՎՀ-ի և սեռավարակների համաճարակների վերաբերյալ միասնական տեսլական առողջապահական ծառայությունների համընդհանուր ծածկույթի (ԱԾՀԾ) շրջանակներում և առողջապահական ծառայությունների վերաբերյալ մոտեցում, 2) վերջ տալ ՁԻԱՀ-ի համաճարակին, 3) վերջ դնել վիրուսային հեպատիտին և 4) վերջ դնել ՍՎ համաճարակներին:

24. 2022-2026թթ. ՄՁԿԱԾ-ն հաստատում է 2022-2030թթ. եվրոպական տարածաշրջանային գործողությունների պլանի (ԵՏԳՊ) տեսլականը և նպատակը. **տեսլական՝ «ՄԻԱՎ վարակի զրո նոր դեպքեր, առողջական վիճակով պայմանավորված զրո մահվան և խտրականության դրսևորման դեպքեր աշխարհում, որտեղ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ կարող են ապրել երկար և առողջ կյանքով» և Նպատակ՝ «վերջ տալ ՁԻԱՀ-ի, որպես հանրային առողջությանը սպառնացող վտանգի համաճարակին մինչև 2030թ-ը, բոլոր տարիքային խմբերի մարդկանց համար՝ առողջ կյանքի ապահովման և բարօրության խթանման համատեքստում»:**

25. Ավելին, 2022-2026թթ. ՄՁԿԱՀ-ի նպատակն է հատկապես նպաստել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի 2-րդ Ռազմավարական ուղղության թիրախների իրագործմանը, որոնցից են՝

- ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի նվազեցում 90%-ով 2010թ.-ից
- ՁԻԱՀ-ով պայմանավորված մահվան դեպքերի 75% կրճատում 2010թ.-ից
- 95-95-95% ՄԻԱՎ վարակի ախտորոշում, բուժում և վիրուսային ծանրաբեռնվածության մակարդակի նվազեցում չափահասների ու երեխաների շրջանում
- 10% ախտորոշում հիվանդության ուշ փուլում

- ՄԻԱՎ վարակի ռիսկի խմբի անձանց 95%-ն օգտվում է համակցված վարակի կանխարգելման միջոցներից
- Վարակի ուղղահայց փոխանցման վերացման ծառայությունների 95% ծածկույթ
- ՄԻԱՎ-ով ապրող և ՏԲ ունեցող անձանց 95%-ը ստանում է ՏԲ կանխարգելիչ բուժում
- ՄԻԱՎ-ով ապրող և ռիսկի խմբում գտնվող անձանց 90%-ն օգտվում է այլ ինտեգրված առողջապահական ծառայություններից
- Խարանի և խտրականության դրսևորումների հետ բախվող ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և առավել վտանգի ենթարկվող խմբերը 10%-ից քիչ են կազմում
- Երկրներում չեն գործում պատժիչ օրենքներ և քաղաքականություններ

26.ԱՀԿ-ի Եվրոպական տարածաշրջանային գործողությունների պլաններն ընդգրկում են երկրների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետ կապված հետևյալ **հինգ առաջնահերթ գործողությունները**, որոնք ուղղակիորեն կապված են 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի խնդիրների և առաջնահերթ ռազմավարությունների հետ (ՄՁԿԱԾ 2022-2026թթ.), ինչպես ներկայացված է ստորև՝

- 1) **Հավաքել ռազմավարական տեղեկատվություն և օգտագործել այն խնամքի տրամադրման ընթացքում կենտրոնացված գործողությունների իրականացման և արդարության ապահովման նպատակով:** Տե՛ս՝ ՄՁԿԱԾ 2022-2026թթ. Առաջնահերթ ռազմավարություն 4.1-ը. «ՄԻԱՎ վարակին առնչվող հսկողության և տեղեկատվական համակարգերի ամրապնդում» և 4.2-ը. «Գործառնական հետազոտությունների և հատուկ ուսումնասիրությունների իրականացում»:
- 2) **Կանխել ՄԻԱՎ վարակի փոխանցումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ԱՎԵԽ-ներին:** Տե՛ս ՄՁԿԱԾ 2022-2026թթ. Խնդիր 1: «Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը՝ ուշադրությունը կենտրոնացնելով բնակչության առավել վտանգի ենթարկվող և ավելի խոցելի խմբերի վրա»:
- 3) **Ռազմավարական առումով մեծացնել հետազոտությունների իրականացումը և ապահովել ՄԻԱՎ վարակի դեպքերի վաղ ախտորոշումը:** Տե՛ս ՄՁԿԱԾ 2022-2026թթ. Առաջնահերթ ռազմավարություն 2.1-ը՝ «Մեծացնել ՄԻԱՎ վարակով ապրող այն մարդկանց թիվը, ովքեր գիտեն իրենց կարգավիճակի մասին»:
- 4) **Ապահովել արագ կապ ՄԻԱՎ վարակի և տարածված համակցված հիվանդությունների համար արդյունավետ խնամքի ծառայություններ տրամադրողների հետ:** Տե՛ս ՄՁԿԱԾ 2022-2026թթ. Առաջնահերթ ռազմավարություն 2.2-ը՝ «Մեծացնել ա) իրենց ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին տեղյակ և ՀՌՎ բուժում ստացող անձանց տոկոսը և բ) մեծացնել ՀՌՎ բուժում ստացող այն մարդկանց տոկոսը, ում մոտ առկա է վիրուսային ծանրաբեռնվածության մակարդակի նվազում»:

- 5) **Պահպանել ֆինանսավորման և պլանավորման ոլորտներում ձեռքբերումները:** Տե՛ս ՄՁԿԱԾ 2022-2026թթ. Առաջնահերթ ռազմավարություն 3.2-ը՝ «Ձևավորել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային կայուն գործողությունների համար նպաստավոր իրավական և ֆինանսական դաշտ»:

2.1.2 Հիվանդությունների վերաբերյալ ազգային ռազմավարությունների հետ համապատասխանությունը

27. **Համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի վերացման 2021–2025թթ.ազգային ռազմավարական պլանի հետ.** Ե՛վ 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը, և՛ Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի վերացման 2021–2025թթ. ազգային ռազմավարական պլանը մշակվել են ՄԻԱՎ վարակի և ՏԲ ծառայությունների ինտեգրման ամրապնդման տեսանկյունից և երկուսն էլ ուղղված են մարդակենտրոն ծառայություններին՝ հատկապես ուշադրությունը կենտրոնացնելով բնակչության առավել ռիսկային և խոցելի խմբերի վրա, որոնցից են աշխատանքային միգրանտները, ԹՆՕ-ները և ՔԿՀ-ներում գտնվող անձինք: Օրինակ՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց մասով սա ներառում է միասնական ռազմավարության մշակում մինչ ՔԿՀ-ից ազատումը և ազատումից հետո ՄԻԱՎ վարակի, ՏԲ-ի և հեպատիտ Յ-ի առնչությամբ միջոցառումների վերաբերյալ: Եվ՛ ՄԻԱՎ վարակի, և՛ ՏԲ ծրագրերում ներառված են աշխատանքային միգրանտների շրջանում հետազոտությունների անցկացման և բուժման հատուկ ռազմավարություններ:

28. Երկու ծրագրերն էլ հիմնված են բոլորի համար մատչելի կանխարգելիչ և բուժման ծառայությունների նկատմամբ իրավունքի և մարդու իրավունքների ու հավասարության ճանաչման վրա, ներառյալ՝ ծառայությունների մատուցման մակարդակում **ապակենտրոնացման և ինտեգրման** կարևորումը: Օրինակ՝ երկու ծրագրերն էլ ուղղված են ՄԻԱՎ վարակի և ՏԲ փոխանցման կանխարգելման, հետազոտությունների և բուժման ծառայությունների ավելի ու ավելի շատ ինտեգրմանը: Սրա մասին է վկայում ՄԻԱՎ վարակի և ՏԲ բաղադրիչների ներառումն ԱՎԵԽ-ների համար նախատեսված (ընդլայնված) ծառայությունների փաթեթներում, ինչպես նաև ՏԲ-ին, ՄԻԱՎ վարակին և վիրուսային հեպատիտին վերաբերող ծառայությունների համատեղ համակարգման և կառավարման պլանավորումն ու ՏԲ-ի, ՄԻԱՎ-ի և ՀՅ վիրուսի հետազոտությունների համար ինտեգրված տեխնոլոգիաների իրականացումը:

29. Համագործակցության հատուկ ոլորտ է **ՏԲ/ՄԻԱՎ համակցված վարակների բուժումը:** Այն ներառում է ՏԲ կանխարգելիչ բուժումը ՄԻԱՎ դրական անձանց շրջանում, ՏԲ-ին, ՄԻԱՎ վարակին և հեպատիտ Յ-ին

առնչվող ծառայություններ տրամադրող բուժհաստատությունների կողմից համատեղ պլանավորման իրականացումը, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման համակարգերի և ծրագրային տվյալների կանոնավոր վերլուծությունների ինտեգրման մեծացումը:

30. Երկու ծրագրերն էլ հստակորեն ներառում են **համայնքահեն ծառայությունների և համայնքի կողմից ղեկավարվող գործողությունների ամրապնդման ռազմավարություններ**, այդ թվում՝ քաղհասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և համայնքահեն կազմակերպությունների ներգրավվածության և դերի ամրապնդում, հատկապես՝ աուրիչ աշխատանքներ համայնքում, ինչպես նաև ՔՀԿ-ների ծառայությունների կայունության և սոցիալական պայմանագրային մեխանիզմների ամրապնդման ռազմավարություններ:
31. Ավելին, երկու ծրագրերում էլ ընդգրկված են **ՄԻԱՎ վարակին և ՏԲ-ին առնչվող ծառայությունների համակարգման, համագործակցության և ինտեգրման ռազմավարություններ**: Օրինակ՝ ՏԲ ծրագիրն ընդգրկում է 2026-2030թթ. ՏԲ-ի, ՄԻԱՎ-ի և վիրուսային հեպատիտի վերաբերյալ համատեղ ազգային ռազմավարական պլանի մշակում: Համագործակցության մեկ այլ ոլորտ է պետական և ՔՀԿ աշխատակիցների՝ ՄԻԱՎ վարակին, ՏԲ-ին և այլ վարակիչ հիվանդություններին առնչվող կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքների ինտեգրումը:
32. **Համապատասխանությունը Արտընդերային վիրուսային հեպատիտի կանխարգելման և վերահսկման 2019-2023թթ. ազգային ծրագրին**. 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը մշակվել է Արտընդերային վիրուսային հեպատիտի կանխարգելման և վերահսկման 2019-2023թթ. ազգային ծրագրի նպատակին և խնդիրներին համահունչ, որը հաստատվել է Առողջապահության նախարարության 2019թ. մայիսի 27-ի թիվ 1387-Լ որոշմամբ (Առողջապահության նախարարություն, 2019թ.): 2019-2023թթ. Վիրուսային հեպատիտի **կանխարգելման և վերահսկման** ազգային ծրագրի նպատակն է նվազեցնել հեպատիտ Բ-ով և Ց-ով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը Հայաստանի Հանրապետությունում: 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը նպաստում է այս նպատակի իրագործմանը հեպատիտ Ց-ի (և ավելի քիչ՝ հեպատիտ Բ-ի) վերաբերյալ հետազոտությունները և բուժման միջամտությունները բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի, մասնավորապես՝ ԹՆՕ-ների համար նախատեսված ծրագրերում և ծառայություններում ինտեգրելու միջոցով:

Այսպիսով, 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը նաև կնպաստի Վիրուսային հեպատիտի 2019-2023թթ. ազգային ծրագրի

կոնկրետ խնդիրների իրականացմանը, որոնցից են՝ 1) վիրուսային հեպատիտի կանխարգելման համակարգի բարելավում (Խնդիր 1), 2) վիրուսային հեպատիտի հայտնաբերման գործընթացի բարելավում (Խնդիր 2), 3) վիրուսային հեպատիտի արդյունավետ բուժման ապահովում (Խնդիր 3), 4) պարենտերալ վիրուսային հեպատիտի ռիսկային գործոնների մասին իրազեկվածության ապահովում բնակչության տարբեր խմբերի շրջանում (Խնդիր 4), 5) պարենտերալ վիրուսային հեպատիտի ներհիվանդանոցային փոխանցման դեպքերի նվազեցում (Խնդիր 5) և 6) Ռիսկի խմբերում և առողջ բնակչության շրջանում հեպատիտ Բ-ի առաջնային կանխարգելում (Խնդիր 6):

2.2 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի նպատակն ու կոնկրետ խնդիրները

33. Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի համընդհանուր նպատակն է ապահովել ՄԻԱՎ վարակին արդյունավետ հակազդման միջոցառումներ 2022-2026թթ. ժամանակահատվածի համար և ձևավորել մինչև 2030թ.-ը ՁԻԱՀ-ը վերացնելու համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ:

34. Ստորև ներկայացված Աղյուսակ 12-ում համառոտ կերպով ներկայացված են **չորս առաջնահերթ ոլորտներն իրենց կոնկրետ խնդիրներով, ինչպես նաև յուրաքանչյուր խնդրի իրականացման առաջնահերթ ռազմավարությունները:**

Աղյուսակ 12. 2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի առաջնահերթ ոլորտները, կոնկրետ խնդիրները և առաջնահերթ ռազմավարությունները.

Առաջնահերթ ոլորտներ և կոնկրետ խնդիրներ	Առաջնահերթ ռազմավարություններ
1. ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ	
Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը՝ ուշադրությունը կենտրոնացնելով բնակչության առավել վտանգի ենթարկվող և ավելի խոցելի խմբերի վրա	1.1 Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը ԹՆՕ-ների համար 1.2 Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը ԿՍԿ-ների և նրանց հաճախորդների համար 1.3 Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը SUS-ների համար

	1.4 Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը ՏԳ-ների համար
	1.5 Ընդլայնել նախակոնտակտային կանխարգելման (ՆԿԿ) հասանելիությունը ԱՎԵԽ-ների համար
	1.6 Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը քրեակատարողական հիմնարկներում և փակ հաստատություններում գտնվող անձանց համար
	1.7 Ամրապնդել ծառայություններ մատուցողի կողմից նախաձեռնված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունների (ԾՆՀ) իրականացումը բոլոր հղիների համար և ՄԵՓԿ միջոցառումները ՄԻԱՎ վարակակիրների համար՝ մորից երեխային փոխանցումը վերացնելու նպատակով (ՄԵՓԿ)
	1.8 Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների և ծրագրերի մատուցումը, համապարփակությունը և որակը լայն հասարակության և այլ ավելի խոցելի խմբերի , այդ թվում՝ աշխատանքային միգրանտների համար :
	1.9 Դոնորական պատրաստուկների և արյան, արյան սերինինգ և օրգանների 100%
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, ԲՈՒԺՈՒՄ ԵՎ ԽՆԱՄՔ Ամրապնդել ՄԻԱՎ վարակի հայտնաբերման, բուժման և խնամքի ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը՝ հետազոտությունների և բուժման կասկադի 95-95-95 հարաբերակցության հասնելու նպատակով	2.1 Մեծացնել ՄԻԱՎ վարակով ապրող այն մարդկանց թիվը, որոնք գիտեն իրենց կարգավիճակի մասին
	2.2 ա) Մեծացնել իրենց ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին տեղյակ և ՀՌՎ բուժում ստացող անձանց տոկոսը և բ) մեծացնել ՀՌՎ բուժում ստացող այն մարդկանց տոկոսը, ում մոտ առկա է վիրուսային ծանրաբեռնվածության մակարդակի նվազում
	2.3 Ամրապնդել ՄԻԱՎ/ՁԻԱՀ խնամքի ծառայությունների մատուցումը,

	համապարփակությունը և որակը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար
<u>3. ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ</u> Ամրապնդել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային միջոցառումների կայունությունը, նվազեցնել խարանն ու խտրականությունը, խթանել մարդու իրավունքները և գենդերային հավասարությունը	3.1 Ամրապնդել առավել վտանգի ենթարկվող խմբերի հետ աշխատող ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ և կազմակերպական կարողությունները՝ ապահովելու համար ինտեգրված, համայնքափն ՄԻԱՎ-ին հակազդման գործողություններ, ինչն էլ կնպաստի ՄԻԱՎ վարակի տարածման տրանսֆորմատիվ և կայուն հակազդմանը 3.2 Ձևավորել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային կայուն գործողությունների համար նպաստավոր իրավական և ֆինանսական դաշտ 3.3 Ապահովել բարենպաստ քաղաքական դաշտ և համայնքային միջավայրեր ԱՎԵԽ-ների և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման, խնամքի և բուժման համար
<u>4. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</u> Մեծացնել ռազմավարական տեղեկատվության առկայությունը և օգտագործումը փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնելու նպատակով	4.1 Ամրապնդել ՄԻԱՎ վարակին առնչվող հսկողության և տեղեկատվական համակարգերը (ընթացիկ տվյալների հավաքում, հաշվետվություններ, տվյալների պահպանում և վերլուծություն) 4.2 Գործառնական հետազոտությունների և հատուկ ուսումնասիրությունների իրականացում

Միջոցառումների ծրագիր

Թիվ	Նպատակ/ Ռազմավարական ուղղություն	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու	Ժամանակա հատված	Ֆինանսավորման աղբյուր	Անհրաժեշտ ֆինանսավոր ում հազար ՀՀ դրամ
	1	2	3	4	5	6	7
1.	ԱՄՐԱՊԵՆԴԵԼ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ, ՀԱՄԱՊԱՐՓԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐԱԿԸ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱՑՆԵԼՈՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԵՎ ԱՎԵԼԻ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՎՐԱ						2,742,471.44
1.1	Ամրապենդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը թմրամիջոցների ներերակային օգտագործողների (ԹՆՕ) համար:	1.1.1 Թարմացնել ԹՆՕ-ների համար ՄԻԱՎ վարակին առնչվող ծառայությունների մատուցման մոդելը և հաշվարկել ծախսերը (համակցված տեղական և միջազգային աջակցություն)	1.1.1 ԹՆՕ-ների համար ծառայությունների մատուցման մոդելը թարմացված է, ծախսերը հաշվարկված են	Առողջապահության նախարարություն (ԱՆ), Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն (ԻՀԱԿ), Հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ)	2022-2023թթ.	Գլոբալ հիմնադրամ, ՄԱԿ –ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ–ի համատեղ ծրագիր	1,312.99
		1.1.2 Տրամադրել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայություններ ԹՆՕ-ներին	1.1.2 ՄԻԱՎ վարակի կանխարգելման համապարփակ փաթեթներից օգտված ԹՆՕ-ների քանակը համապատասխանում է տարեկան թիրախներին	ՀԿ-ներ ԻՀԱԿ	2022-2024թթ. 2024-2026թթ.	Գլոբալ հիմնադրամ ԻՀԱԿ (պետական բյուջե)	445,864.77
		1.1.3 Տրամադրել ափիոնատիպ նյութերից կախվածության փոխարինող մեթադոնային բուժում (ԱՓԲ) ԹՆՕ-ներին առաջնահերթ վայրերում	1.1.3 Համայնքային մակարդակում և քրեակատարողական հիմնարկներում ԱՓԲ ստացած ԹՆՕ-ների քանակը	Կախվածությունների բուժման ազգային կենտրոն (ԿԲԱԿ) Առողջապահության նախարարություն	2022թ.	Գլոբալ հիմնադրամ	357,730,367.4 0 (Ծրագրի իրականացման ծախս) 286,470,000.0

		համապատասխանում է տարեկան թիրախներին				(մեթադոնի գնում)
				2023-2026թթ.	պետական ֆինանսավորում	644,200.37
1.1.4. Իրականացնել ադվոկացիա (ակտիվ հանրային պաշտպանություն) և պաշտոնապես գրանցել Նալոքսոնը գերդոզավորումների ժամանակ բուժման և բուժաշխատողների կողմից բժշկական և համայնքային հաստատություններում կիրառման համար	1.1.4 Նալոքսոնը գրանցված է ԹՆՕ-ների գերդոզավորման բուժման նպատակով օգտագործվելու համար և հասանելի է դրա կարիքն ունեցող բոլոր ԹՆՕ-ներին:	ԿԲԱԿ ՀԿ-ներ Առողջապահության նախարարություն	2022-2024թթ.	Գլոբալ հիմնադրամ	954.90	
1.1.4.Բ Նալոքսոնի տրամադրում թրմանյութերից գերդոզավորման բուժման նպատակով			2024-2026թթ.	պետական ֆինանսավորում, դոնորների աջակցությամբ իրականացվող ծրագրեր	17,474.67	
1.1.5 Գերդոզավորման և ԱՓԲ բուժման պետական ծառայություններ մատուցողների (նարկոլոգներ, ԱՓԲ ծառայությունների աշխատակիցներ, շտապօգնության աշխատակիցներ) ամենամյա ուսուցում (վերապատրաստում)	1.1.5 Պետական հաստատությունների նարկոլոգները և ԱՓԲ ծառայություններ տրամադրողները, ընտրված բուժաշխատողներ մասնակցել են բազային վերապատրաստման	ԿԲԱԿ Առողջապահության ազգային ինստիտուտ (ԱԱԻ)	2022-2026թթ.	դոնորների աջակցությամբ իրականացվող ծրագրեր, Առողջապահության նախարարություն	1,432.35	

		դասընթացների ամեն տարի				
	1.1.6 ԹՆՕ-ներին ծառայություններ տրամադրող ՀԿ-ների աշխատակիցների ամենամյա ուսուցում (վերապատրաստում) ՄԻԱՎ վարակի կանխարգելման, վնասի նվազեցման, ՄԻԱՎ/հեպատիտ Ց-ի (ինքնուրույն կատարվող) հետազոտությունների, համայնքային աուդիտի աշխատանքի, ԱՓԲ և գերդոզավորման բուժման, ՆԿԿ հարցերի վերաբերյալ	1.1.6 Ընտրված քաղաքներում/մարզերում ԹՆՕ-ներին ծառայություններ տրամադրող ՀԿ-ներն անցել են ամենամյա դասընթացներ ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելման, վնասի նվազեցման, ԱՓԲ, գերդոզավորման հիմունքների վերաբերյալ	ԿԲԱԿ ԻՀԱԿ ԱԱԻ	2022-2026թթ.	Գլոբալ հիմնադրամ, դոնորների աջակցությամբ իրականացվող այլ ծրագրեր, Առողջապահության նախարարություն	954.90
	1.1.7 «Հավասարը հավասարին» սկզբունքով ԹՆՕ աուդիտի աշխատողների (ԱԱ) ամենամյա ուսուցում (վերապատրաստում) ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման, վնասի նվազեցման և ԱՓԲ ծառայությունների մատուցման ուղղությամբ	1.1.7 Ընտրված քաղաքներում/մարզերում «հավասարը հավասարին» սկզբունքով ԹՆՕ աուդիտի աշխատողներն անցել են ամենամյա դասընթացներ ՄԻԱՎ վարակի կանխարգելման, վնասի նվազեցման և աուդիտի	ԹՆՕ-ներին ծառայություններ տրամադրող ՀԿ-ներ	2022-2026թթ.	Գլոբալ հիմնադրամ, դոնորների աջակցությամբ իրականացվող այլ ծրագրեր, Առողջապահության նախարարություն	859.41

		աութիչ աշխատանք կատարելու վերաբերյալ:	աշխատանքի վերաբերյալ				
1.2	Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրողների (ԿՍ) և նրանց հաճախորդների համար:	1.2.1 ԿՍ-ների համար ՄԻԱՎ կանխարգելման ծառայությունների մատուցման մոդելի թարմացում և ծախսերի հաշվարկ (տեղական և միջազգային տեխնիկական աջակցություն)	1.2.1 ԿՍ ծառայությունների մատուցման թարմացված և ծախսերը հաշվարկված մոդել	Առողջապահության նախարարություն, ԻՀԱԿ, ՀԿ-ներ	2022- 2023թթ.	Գլոբալ հիմնադրամ, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ- ի համատեղ ծրագիր	1,312.99
